ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/126

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Բողոք բերող՝ «Ալիկանտե» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Վերիտաս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ալիկանտե» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Մ. Եսայանի,
«Վերիտաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Խաչատրյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՃՈ/ԱՊԱԿԻ/2021/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ապակիների մգեցվածությունը չափող սարքերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ալիկանտե» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 18.12.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՃՈ/ԱՊԱԿԻ/2021/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Դադարեցնել 17.12.2020թ.-ին և 15.12.2020թ.ին կայացված համախատասխանաբար թիվ 5 և թիվ 4 արձանագրությունները,

2. Ընդունել նոր բանակցություններ հրավիրելու մասին որոշում՝ ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4 թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության պահպանմամբ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 18.12.2020թ.-ին:

18.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/126 համարի ծածկագիրը:

28.12.2020թ.-ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Վերիտաս» ՍՊԸ-ն 12.01.2021թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

24.12.2020թ.-ին, 29.12.2020թ.-ին և 15.01.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 29.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.01.2021թ.-ին:

2. «Ալիկանտե» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ալիկանտե» ՍՊԸ-ն 18.12.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Ցանկանում են տեղեկացնել, որ ս.թ. նեյեմբերի 26-ին ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպվել է Ապակիների մգեցվածությունը չափող սարքերի գնման ընթացակարգ:

Նշված գնման ընթացակարգին մասնակցել են Ալիկանտե ՍՊԸ և Վերիտաս ՍՊԸ: Հայտնում ենք, որ գնման ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ սույն ընթացակարգը կազմակերպվում է Գնումների մասին ՀՀ օրենքի 15 հոդվածի 6 մասի հիման վրա՝ այսինքն առկա չեն ֆինանսական միջոցներ:

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացումը տեղի է ունեցել դեկտեմբերի 9-ին:

Գնահատող հանձնաժողովի կողմից դեկտեմբերի 11-ին կայացված արձանագրությունով նշվել է, որ հաշվի առնելով Հրավերի 8.7 կետի բ ենթակետի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 թիվ 526-Ն որոշման 40 մասի 6 կետի պահանջը, որոշում է կայացվել նիստը կասեցնել և հայտեր ներկայացրած մասնակիցներին հրավիրել միաժամանակյա բանակցությունների:

Բանակցությունները տեղի կունենան ծանուցման հաջորդող երկրորդ աշխատանքային օրը 15.12.2020թ ժամը 11:00-ին:

Ալիկանտե ՍՊԸ և Վերիտաս ՍՊԸ վերը նշված օրը և նշված ժամին ներկայացել են ՀՀ ոստիկանություն մասնակցելու համապատասխան բանակցությունների: Չնայած այն հանգամանքին, որ բացի գնահատող հանձնաժողովի քարտուղարից հանձնաժողովի այլ անդամ ներկա չի եղել, մասնակիցներին առաջարկվել է սկսել բանակցությունները, որի արդյունքում Ալիկանտե ՍՊԸ ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 թիվ 526-Ն որոշման 40 կետի 5 ենթակետի (այլ ոչ թե 6, ինչպես նշվել է արձանագրության մեջ) համաձայն՝ եթե գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Սակայն բավականին անսպասելի Ալիկանտե ՍՊԸ համար armeps.am համակագի ոչ ավտոմատ ծանուցման միջովոց 16.12.2020 թվականին ժամը 17:21 ստացվում է ՀՀ ոստիկանության կողմից ծանուցում: Ծանուցման մեջ նշվել է, որ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՃՈ/ԱՊԱԿԻ/2021/Հ-13 ծածկագրով հայտեր ներկայացրած մասնակիցներին հրավիրել

միաժամանակյա բանակցությունների 17.12.2020թ. ժամը 11:00-ին, Նալբանդյան 130 հասցեով:

Գնահատող հանձնաժողովի կողմից 15.12.2020 թվականին կայացված և 16.12.2020 թվականին gnumner.am կայքում հրապարակվել է N 4 արձանագրությունը, և նշվել է, որ 15.12.2020թ. ժամը 11:00-ին հայտեր ներկայացրած մասնակիցները ներկայացել են բանակցությունների, սակայն պատասխանատու ստորաբաժանման ներկա չգտնվելու պատճառով նիստը չի կայացել:

Ալիկանտե ՍՊԸ բնականաբար չի ներկայացնել հրավիրված նոր բանակցություններին, քաջ գիտակցելով, որ եթե այս անգամ էլ ներկայանա և ներկայացնի նվազագույն գնային առաջարկ, ապա այս անգամ ևս գնահատող հանձնաժողովը չեղյալ կանի նիստը, այս անգամ արդեն այն պատճառով, որ խախտվել է ծանուցման ժամկետը, իսկ մյուս անգամ կարող է բերել նաև այլ պատճառաբանություն և այդպես շարունակ:

Գնահատող հանձնաժողովը gnumer.am կայքում 17.12.2020 թվականին հրապարակել է N 5 արձանագրությունը, որտեղ նշվել է, որ բանակցությունների մասնակկցել է միայն Վերիտաս ՍՊԸ և ներկայացնելով ավելի բարձր գնային առաջարկ քան Ալիկանտե ՍՊԸ նախորդ բանակցություններին, (Ալիկանտե ՍՊԸ առաջարկել էր 20.000.000 դրամ, իսկ Վերիտաս ՍՊԸ առաջարկել է 23.000.000 դրամ) հաղթող մասնակից է ճանաչում Վերիտաս ՍՊԸ:

Հարգելի գնումների հետ կապված բողոքներ քննող անձ, մենք գտնում ենք, որ ՀՀ ոստիկանության ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՃՈ/ԱՊԱԿԻ/2021/Հ-13 ծածկագրով գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել օրենքի կոպիտ խախտում, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 թիվ 526-Ն որոշման 40 կետի 5 ենթակետի գ մասի խախտում, սահմանափակվել է մեր ընկերության մրցակցության իրավունքը, ինչը հանդիսանում է այս բողոքի հիմք:»:

Ի լրումն 18.12.2020թ.-ին ներկայացված բողոքի, Ընկերությունը 24.12.2020թ.-ին ներկայացրել է ապացույց ներկայացնելու վերաբերյալ դիմում հետևյալ բովանդակությամբ.

«18.12.2020թ վստահորդիս՝ «Ալիկանտե» ՍՊԸ անունից ներկայացվել է բողոք հետևյալ պահանջով, «խնդրում ենք որպեսզի գնումների հետ կապված բողոքներ քննող անձը կայացնի Գնումների մասին ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով նախատեսված որոշում և պարտավորեցնի ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՃՈ/ԱՊԱԿԻ/2021/Հ-13 ծածկագրով գնահատող հանձնաժողովին դադարեցնել 17.12.2020 թվականի N 5 արձանագրությունը և 15.12.2020 թվականին կայացված N 4 արձանագրությունը, ինչպես նաև պարտավորեցնել ՀՀ Ո

ԳՀԱՊՁԲ-ՃՈ/ԱՊԱԿԻ/2021/Հ-13 ծածկագրով գնահատող հանձնաժողովին ընդունել նոր՝ բանակցություններ հրավիրելու մասին որոշում՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 թիվ 526-Ն որոշման 40 կետի 5 ենթակետի գ մասի պահպանմամբ:»

Ի հիմնավորումն բողոքում ներկայացված այն փաստարկի, որ ՀՀ Ոստիկանությունը armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Ընկերությանը 16.12.2020 թվականին ժամը 16:21-ին է միայն ծանուցել հաջորդ օրը կայացվելիք բանակցությունների մասին՝ ներկայացվում է Ընկերության էլեկտրոնային հասցեից վերծանում (screenshot), որը հավաստում է, որ ՀՀ Ոստիկանությունը կայացվելիք բանակցությունների մասին ծանուցումը իրականացվել է օրենքի՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 թիվ 526-Ն որոշման 40 կետի 5 ենթակետի գ մասի խախտմամբ:

Միևնույն ժամանակ ի պատասխան ՀՀ Ոստիկանության կողմից ներկայացված առարկությունների ցանկանում ենք հայտնել, որ Ընկերության կողմից 17.12.2020թ կայացած բանակցություններին չներկայանալը ինքնանպատ չէր, այլ մրցույթի ողջ գործաընթացի օրինականությունը ապահովելը: Ընկերությունը չի հետապնդում ՀՀ Ոստիկանության բնականոն աշխատանքը խաթարելու կամ առհասարակ գնումների գործընթացը արհեստական ձգձգելու նպատակ, այլ հակառակը, ցանկանում է, որ գործընթացը իրականացվի օրենքի սահմաններում: Անվիճելի է, որ թույլ տված առևերևույթ խախտումները կարող էին դառնալ վեճի առարկա շահագրգիռ կողմի համար, ուստի և Ընկերությունը չի մասնակցել 17.12.2020թ կազմակերպված բանակցություններին:

Հաշվի առնելով վերը նշվածը և բողոքում ներկայացված հիմքերը պնդում ենք պահանջը:»:

Ելնելով վերոգրյալից, «Ալիկանտե» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՃՈ/ԱՊԱԿԻ/2021/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Դադարեցնել 17.12.2020թ.-ին և 15.12.2020թ.ին կայացված համախատասխանաբար թիվ 5 և թիվ 4 արձանագրությունները,

2. Ընդունել նոր բանակցություններ հրավիրելու մասին որոշում՝ ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4 թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության պահպանմամբ:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 21.12.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-Լ0/2/19137-2020 գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ալիկանտե» ՍՊԸ-ի կողմից 18.12.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 23.12.2020թ.-ին գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Ի պատասխան «Ալիկանտե» ՍՊԸ-ի կողմից 18.12.2020թ.-ին ներկայացված բողոքի 26.11.2020թ.-ի թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՃՈ/ԱՊԱԿԻ/2021/Հ-13 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ, հայտնում եմ ՀՀ ոստիկանության դիրքորոշումը:

Ելնելով վերոգրյալից հայտնում եմ, որ սույն թվականի դեկտեմբերի 11-ի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ հայտ ներկայացրած մասնակիցները 15.12.2020թ.-ին ժամը 11:00-ին հրավիրվել են միաժամանակյա բանակցության: Սակայն, գնահատող հանձնաժողովի անդամների բացակայության պատճառով համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526 Ն որոշման կարգի (այսուհետ՝ կարգ) 26-րդ մասի 2-րդ կետի, նիստը համարվել է ոչ իրավազոր: Ինչպես նաև նույն կարգի 15-րդ կետի համաձայն՝ ընթացակարգի քարտուղարը չի հանդիսանում գնահատող հանձնաժողովի անդամ:

Միաժամանակ հայտնում եմ, որ 15.12.2020թ.-ի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է վերը նշվածը, ինչպես նաև հայտ ներկայացրած մասնակիցներին ծանուցվել է բանակցության օրվա և ժամի մասին: Բանակցությանը ներկա է գտնվել միայն «Վերիտաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, ով առաջարկել է 22 000 000 ՀՀ դրամ:

Իսկ ինչ վերաբերվում է բանակցությանը «Ալիկանտե» ՍՊԸ-ի ներկայացուցչի ներկա չգտնվելուն և բացակայությանը հիմնավորել նրանով, որ քաջ գիտակցել են, որ եթե ներկայանան բանակցությանը այս անգան ևս գնահատող հանձնաժողովը չեղյալ կանի նիստը, այն պատճառով, որ խախտվել է ծանուցման ժամկետը, ապա անտրամաբանական է, թե ինչու «Ալիկանտե» ՍՊԸ-ն պահանջում բողոքը քննող անձից երրորդ անգամ բանակցային նիստ հրավիրել, երբ իր բողոքում նշում է, որ մյուս անգամները ևս վստահ է

որ գնահատող հանձնաժողովը տարբեր պատճառներով շարունակ չեղարկելու է բանակցային գործընթացը: «Ալիկանտե» ՍՊԸ-ն՝ առաջնորդվելով իր ենթադրություններով, անտրամաբանական պատճառաբանություններ բերելով, չներկայանալով բանակցային գործընթացին և բողոք ներկայացնելով, կաթվածահար է անում գնման գործընթացը՝ կասեցնելով այն: «Ալիկանտե» ՍՊԸ-ի տրամաբանությամբ առաջնորդվելով ցանկացած մրցույթ կարելի է կաթվածահար անել՝ ներկայացնելով բողոք ենթադրությունների հիման վրա:

Ուստի՝ ՀՀ ոստիկանությունը առաջնորդվելով գնումների մասին ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության կողմից գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանելու մասին որոշումով, մասնակցի ընտրությունը կատարում է առաջնորդվելով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային նվազագույն առաջարկներ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Այդ իսկ պատճառով ՀՀ ոստիկանությունը հայտնում է, որ եթե բողոքը քննող անձը հիմնավոր համարի բողոքը և որոշում կայացնի նոր բանակցություններ հրավիրելու վերաբերյալ, ապա ՀՀ ոստիկանությունը չունի առարկություններ:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՃՈ/ԱՊԱԿԻ/2021/Հ-13» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Վերիտաս» ՍՊԸ-ն 12.01.2021թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձի ներկայացուցիչը, ներկայանալով 12.01.2021թ.-ին հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՃՈ/ԱՊԱԿԻ/2021/Հ-13» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգին, բողոքի իրավական և փաստական հանգամանքներին:

5. <u>ԳԲՔԱ-LO-2020/126 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ապակիների մգեցվածությունը չափող սարքերի ձեռքբերման նպատակով 26.11.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՃՈ/ԱՊԱԿԻ/2021/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ալիկանտե» ՍՊԸ-ն և «Վերիտաս» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.12.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի և «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՃՈ/ԱՊԱԿԻ/2021/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.7 կետի «բ» ենթակետի պահանջները, որոշում է կայացրել նիստը կասեցնել և հայտեր ներկայացրած մասնակիցներին հրավիրել միաժամանակյա բանակցությունների սույն ծանուցման հաջորդող 2-րդ աշխատանքային օրը /15.12.2020թ.-ին/:

iv. Հանձնաժողովի 15.12.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Մասնակիցները ներկայացել են բանակցությանը, սակայն պատասխանատու ստորաբաժանման բացակայության պատճառով նիստը չի կայացել, ուստի Կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ 15.12.2020թ.-ին կայացած նիստը համարվում է ոչ իրավազոր, իսկ նույն կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ որոշում է կայացվել Հանձնաժողովի հաջորդ բանակցային նիստը հրավիրել 17.12.2020թ.-ին:

v. Հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ 16.12.2020թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ծանուցում է ուղարկվել «Ալիկանտե» ՍՊԸ-ին և «Վերիտաս» ՍՊԸ-ին, որով հայտնել են, որ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՃՈ/ԱՊԱԿԻ/2021/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցները հրավիրվում են միաժամանակյա բանակցությունների՝ 17.12.2020թ.-ին ժամը 11:00-ին:

vi. Հանձնաժողովի 17.12.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ 17.12.2020թ.-ի բանակցային գործընթացին ներկա է գտնվել միայն «Վերիտաս» ՍՊԸ-ն՝ ներկայացնելով 22 000 000 ՀՀ դրամի գնային առաջարկի նվազեցում, ինչով պայմանավորված վերջինս ճանաչվել է ընտրված մասնակից:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ալիկանտե» ՍՊԸ-ի կողմից 18.12.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա

ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

ՀՀ ոստիկանության կողմից ապակիների մգեցվածությունը չափող սարքերի ձեռքբերման նպատակով 26.11.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՃՈ/ԱՊԱԿԻ/2021/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է

գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու կամ վերջիններիս ներկայացուցիչների՝ բանակցություններին մասնակցելու (բանակցություններ վարելու) իրավասությամբ օժտված չլինելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հայտերի բացման նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի առնվազն երկու անդամ:

Նույն կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստն իրավազոր չլինելու դեպքում դրա մասին հայտնի դառնալու պահին քարտուղարը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին, որը հետևյալ հաջորդականությամբ՝

ա. ոչ ավելի, քան երկու աշխատանքային օրով կասեցնում է գնման գործընթացը,

բ. ապահովում է տվյալ անդամի ներկայանալը հանձնաժողովի նիստին կամ տվյալ անդամի փոխարեն, պատասխանատու ստորաբաժանման առաջարկության հիման վրա, նշանակում է հանձնաժողովի նոր անդամ,

գ. սահմանում է նիստի անցկացման օրը և ժամը, որը չպետք է ուշ լինի գնման ընթացակարգի կասեցման վերջնաժամկետից:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնահատող հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով, իսկ նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Գնահատող հանձնաժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե այդ որոշմանը կողմ են քվեարկել հանձնաժողովի նիստին ներկա անդամների կեսից ավելին:

Ընդ որում, գնահատող հանձնաժողովի նիստն իրավազոր չլինելու դեպքում դրա մասին հայտնի դառնալու պահին քարտուղարը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին, որը ոչ ավելի, քան երկու աշխատանքային օրով կասեցնում է գնման գործընթացը, ապահովում է տվյալ անդամի ներկայանալը հանձնաժողովի նիստին կամ տվյալ անդամի փոխարեն, պատասխանատու ստորաբաժանման առաջարկության հիման վրա, նշանակում է հանձնաժողովի նոր անդամ, որից հետո միայն սահմանում է նիստի անցկացման օրը և ժամը, որը չպետք է ուշ լինի գնման ընթացակարգի կասեցման վերջնաժամկետից:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության կողմից ապակիների մգեցվածությունը չափող սարքերի ձեռքբերման նպատակով 26.11.2020թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՃՈ/ԱՊԱԿԻ/2021/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ալիկանտե» ՍՊԸ-ն և «Վերիտաս» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 11.12.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հրավիրել են միաժամանակյա բանակցությունների նույն ծանուցման հաջորդող 2-րդ աշխատանքային օրը /15.12.2020թ.-ին/: Հանձնաժողովի 15.12.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Մասնակիցները ներկայացել են բանակցությանը, սակայն պատասխանատու ստորաբաժանման (հանձնաժողովի անդամների) բացակայության պատճառով նիստը չի կայացել, ուստի Կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ 15.12.2020թ.-ին կայացած նիստը համարվել ոչ իրավազոր, իսկ նույն կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ որոշում է կայացվել Հանձնաժողովի հաջորդ բանակցային նիստը հրավիրել 17.12.2020թ.-ին: Հանձնաժողովի 17.12.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ 17.12.2020թ.-ի բանակցային գործընթացին ներկա է գտնվել միայն «Վերիտաս»

ՍՊԸ-ին՝ ներկայացնելով 22 000 000 ՀՀ դրամի գնային առաջարկի նվազեցում, ինչով պայմանավորված վերջինս ճանաչվել է ընտրված մասնակից:

Գործում առկա վեճի առարկա հանդիսացող ծանուցման համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ 16.12.2020թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ծանուցում է ուղարկվել «Ալիկանտե» ՍՊԸ-ին և «Վերիտաս» ՍՊԸ-ին, որով հայտնել են, որ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՃՈ/ԱՊԱԿԻ/2021/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցները հրավիրվում են միաժամանակյա բանակցությունների՝ 17.12.2020թ.-ին ժամը 11:00-ին:

Նշված բանակցություններին ներկայացել է միայն «Վերիտաս» ՍՊԸ-ն:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՃՈ/ԱՊԱԿԻ/2021/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, քանի որ մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու կամ վերջիններիս ներկայացուցիչների՝ բանակցություններին մասնակցելու (բանակցություններ վարելու) իրավասությամբ օժտված չլինելու դեպքում հանձնաժողովի նիստը պետք է կասեցվի, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ պետք է ծանուցի գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը պետք է վարվի ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը, ինչը չի կատարվել Հանձնաժողովի կողմից, այն է՝ «Ալիկանտե» ՍՊԸ-ն հրավիրվել է բանակցությունների ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրը, ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտում:

Բացի այդ, թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ պատասխանատու ստորաբաժանման բացակայության պատճառով նիստը չի կայացել, սակայն Կարգի 26-րդ կետով հստակ սահմանվում է, որ միայն գնահատող հանձնաժողովի անդամները բացակայության պայմաններում կարող է նիստը կասեցվել և համարվել ոչ իրավազոր, ուստի տվյալ պարագայում Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել նաև Կարգի 26-րդ կետով սահմանված պահանջների խախտում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՃՈ/ԱՊԱԿԻ/2021/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թիվ 4 և 5 արձանագրություններով կայացված որոշումներն իրավաչափ չեն, քանի որ Հանձնաժողովը խախտելով Կարգի 26-րդ, 40-րդ և Հրավերի 8.7 կետերը, չի ապահովել Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված դրույթները, որպիսի պայմաններում «Ալիկանտե» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ալիկանտե» ՍՊԸ-ի կողմից 18.12.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/126 ծածկագրով բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՃՈ/ԱՊԱԿԻ/2021/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել 17.12.2020թ.-ին և 15.12.2020թ.ին կայացված համախատասխանաբար թիվ 5 և թիվ 4 արձանագրությունները,
- ընդունել նոր բանակցություններ հրավիրելու մասին որոշում՝ ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4 թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության պահպանմամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**